



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ՄՈՑԻՈՆՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ



Հետազոտությունը պատրաստվել է «Լոռու Չարգացման Կենտրոն» ՀԿ-ի «Չարգացած կարողություններով դեպի զարգացող աշխարհ» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է «ՀԿ Կենտրոն» ԶՀԶ ՀԿ-ի կողմից՝ «ՀԿ ծառայություն մատուցող կազմակերպությունները հանուն քաղաքացիական հասարակության զարգացման» ծրագրի շրջանակներում:

Հետազոտությունը հնարավոր է դարձել Ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Հետազոտության բովանդակության համար պատասխանատվությունը միմիայն հեղինակներինն է, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Վանաձոր
2017թ.

Գարգառ, Գյուլագարակ, Ձորագյուղ և Վահագնի համայնքների 17-30 տարեկան երիտասարդների վերաբերմունքը մասնագիտական կողմնորոշման խնդիրների վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտության ծրագրի հիման վրա

Ներածություն

Այսօր ՀՀ-ում լուրջ հիմնախնդիր է երիտասարդների մասնագիտական կողմնորոշման հարցը: Երիտասարդների մեծ մասը չի ստանում բարձրագույն կրթություն կամ ձեռք է բերում այնպիսի մասնագիտություն, որը չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին:

Լոռու մարզի Գյուլագարակ, Գարգառ, Ձորագյուղ և Վահագնի համայնքների երիտասարդները չունեն մասնագիտական կողմնորոշման հնարավորություն, ինչի հետևանքով ձեռք բերված մասնագիտությունները չեն ապահովում աշխատանքով և չեն դառնում հմտություն:

Ըստ ՀՀ Լոռու մարզի 2014-2018 թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի (հավելված ՀՀ Կառավարության 2014թ. Փետրվարի 6-ի համար 113-Ն որոշման) երիտասարդների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցում կազմում է 98.8%, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ համեմատաբար քիչ: Թիրախ համայնքներում թվով 40 (յուրաքանչյուր համայնքում 10) երիտասարդների հետ առերես հանդիպումներից պարզ դարձավ, որ հատկապես Նշված համայնքներում առկա է վերոնշյալ խնդիրը:

Այս ամենը բացասաբար է անդրադառնում դեմոգրաֆիկ և միգրացոն գործոնների վրա, հետևապես այս խնդիրը կարիք ունի հետազոտման և տվյալ համայնքներում առավել արդյունավետ գործող մոդելի առաջադրման:

Ներկայումս կրթության հետ կապված հիմնախնդիրները գտնվում են ամբողջ աշխարհի ուշադրության կենտրոնում: Հայաստանը, լինելով փոքր երկիր և ունենալով տնտեսական լուրջ խնդիրներ, հատկապես կարևորում է կրթության դերը սոցիալ-ժողովրդագրական ընդհանուր համակարգում: Կրթական համակարգի բարելավումը ուղիղ համեմատական է տնտեսական ու սոցիալական խնդիրների լուծմանը: Կրթության ոլորտի հիմնախնդիրների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում մասնագիտական կողմնորոշման խնդիրը: Այս խնդիրը առանձնապես վառ է արտահայտված գյուղական համայնքներում, որտեղ կապը քաղաքի հետ թույլ է, չկան որակյալ մասնագետներ, դասընթացներ գրեթե չեն կազմակերպվում: Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն տրվում է հիմնականում ծնողի կողմից, երբեմն էլ՝ ուսուցիչների: Սակայն պետք է նշել, որ վերջիններս կողմից տրվող խորհուրդները ոչ թե որևէ կազմակերպված ծրագրի արդյունք են, այլ սրտացավության: Պարզ է, որ սա բավական չէ, որպեսզի երիտասարդը ճիշտ ընտրություն կատարի մասնագիտության հարցում: Արդյունքում երիտասարդները ընտրում են այնպիսի մասնագիտություններ, որոնք պահանջված չեն շուկայում, և դա հանգեցնում է գործազրկության, հաճախ էլ ընտրում են մատչելի տարբերակ և ստանում ոչ որակյալ կրթություն:

Հետազոտության նպատակը, խնդիրները և մեթոդությունը

Նպատակը

Առաջարկել Գարգառ, Գյուլագարակ, Ձորագյուղ և Վահագնի համայնքներում երիտասարդների մասնագիտական կողմնորոշման խնդրի լուծման առավել արդյունավետ գործող մոդել:

Խնդիրները

- Ուսումնասիրել թիրախ համայնքներում բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկ երիտասարդների գործազրկության պատճառները,
- Ուսումնասիրել թիրախ համայնքներում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստացած երիտասարդների մասնագիտական ընտրության պատճառները,
- Բացահայտել թիրախ համայնքներում մասնագիտական կողմնորոշման կենտրոնների առկայությունը,
- Պարզել՝ թիրախ համայնքներում ուսուցիչների կողմից կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշման դասընթացներ, թե ոչ
- Ուսումնասիրել աշխատաշուկայի ծավալը թիրախ համայնքներում,
- Ուսումնասիրել թիրախ համայնքներում 17-30 տարեկան երիտասարդների ծնողների կրթական մակարդակը,
- Ուսումնասիրել երիտասարդների միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն չստանալու պատճառները,
- Պարզել, թե երիտասարդները որքանով են մոտիվացված մասնակցելու մասնագիտական կողմնորոշման դասընթացների:
- Պարզել թիրախ համայնքի բնակիչների կարծիքը մասնագիտական կողմնորոշման առավել արդյունավետ տարբերակների վերաբերյալ:

Այս նպատակին հասնելու համար մշակված է հետևյալ մեթոդությունը.

Հարցաթերթ

Վերջնական տարբերակում, փորձնական հարցման հիման վրա հաստատված հարցաթերթը ներառում է հետևյալ բլոկները.

- Ուսումնասիրել թիրախ համայնքներում բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկ երիտասարդների գործազրկության պատճառները,
- Ուսումնասիրել թիրախ համայնքներում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստացած երիտասարդների մասնագիտական ընտրության պատճառները,
- Բացահայտել թիրախ համայնքներում մասնագիտական կողմնորոշման կենտրոնների առկայությունը,
- Պարզել՝ թիրախ համայնքներում ուսուցիչների կողմից կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշման դասընթացներ, թե ոչ,
- Ուսումնասիրել աշխատաշուկայի ծավալը թիրախ համայնքներում,
- Ուսումնասիրել թիրախ համայնքներում 17-30 տարեկան երիտասարդների ծնողների կրթական մակարդակը,

- Ուսումնասիրել երիտասարդների միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն չստանալու պատճառները,

- Պարզել, թե երիտասարդները որքանով են մոտիվացված մասնակցելու մասնագիտական կողմնորոշման դասընթացների:

- Պարզել թիրախ համայնքի բնակիչների կարծիքը մասնագիտական կողմնորոշման առավել արդյունավետ տարբերակների վերաբերյալ:

Բացի այս հարցաթերթում ամրագրված են հարցման մասնակիցների սոցիալ-ժողովրդագրական բնութագրերը՝ սեռը, տարիքը:

Ֆոկուս խումբ

Ֆոկուս խումբ քննարկումը, ինչպես և հարցաթերթիկը ներառել է վերոնշյալ բլոկները:

**ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

Հարցման մասնակիցների ընդհանուր քանակը 100՝17-30 տարեկան երիտասարդներ Գարգառ, Գյուլագարակ, Ձորագյուղ և Վահագնի համայնքներից


Սոցիալ-ժողովրդագրական տվյալները

Աղյուսակը արտացոլում է միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական տվյալները

ՍԵՌ		ՏԱՐԻՔ		
Արական	Իգական	17-20 տարեկան	21-25 տարեկան	26-30 տարեկան
54%	46%	23%	35%	42%

Աղյուսակը արտացոլում է միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների սոցիալ-ժողովրդագրական տվյալները.


ՍԵՌ		ՏԱՐԻՔ		
Արական	Իգական	17-20 տարեկան	21-25 տարեկան	26-30 տարեկան
50%	50%	17%	30%	53%



Հետազոտության ծրագրում առաջադրված խնդիրները պարզելու նպատակով որպես ինֆորմացիայի հավաքագրման մեթոդ ընտրվել են ֆոկլոր խումբը և սոցիոլոգիական հարցումը: Հաշվի առնելով, որ վերլուծության համար կարևոր էր հետազոտության օբյեկտ հանդիսացող երիտասարդների կրթական մակարդակն ու մոտեցումները հետազոտության հիմնախնդրի շուրջ, այդ պատճառով հարցաթերթիկային հարցումն անցկացվել է և միջնակարգ, և միջին մասնագիտական ու բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների հետ: Վերլուծության պատկերն առավել տեսանելի դարձնելու համար ներկայացնենք հետազոտության ընթացքում ստացված տեղեկատվությունը: Նախ՝ վերլուծության համար մեզ համար կարևոր էր պարզել միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների զբաղվածությունը:

Չբաղվածությունը

- Աշխ. Պետական ոլորտում
- Աշխ. մասնավոր ոլորտում
- Ինքնազբաղված են
- Չբաղվում են տնային տնտ.
- Գործազուրկ են
- Ուսանող են




Ինչպես երևում է գրաֆիկից, հարցվածների առավել մեծ տոկոս է կազմում (31%) այն երիտասարդների թիվը, ովքեր գործազուրկ են կամ ինքնազբաղված են(27%):

Հաջող գրաֆիկում երևում է, որ միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների 50%-ը դպրոցն ավարտելուց հետո կրթությունը չի շարունակել ֆինանսական ռեսուրսների սակավ լինելու պատճառով, իսկ 33%-ը կամ ցանկություն չի ունեցել, կամ անսիմաստ է համարել, իսկ 13%-ը կազմել են հետևյալ տարբերակները՝ դպրոցն ավարտելուց հետո ամուսնացել են և չեն շարունակել կրթությունը, ավարտելուց հետո բանակ են գնացել, և միայն 4%-ն է տիրապետում այլ արհեստի:

Ծնողների կրթությունը


- Տարրական
- Միջնակարգ
- Միջին մասն.
- Թերի բարձր.
- Բարձրագույն



Նշեք կրթությունը չշարունակելու պատճառները

միջնակարգ կրթությամբ հարցվող

- Անիմաստ եմ համարում
- Ֆինանս. ռեսուրսների սակավ լինելու պատճառով
- Ցանկություն չեմ ունեցել
- Տիրապ. եմ այլ արհեստի
- Այլ




Միջնակարգ կրթություն ունեցող հարցվածների մեծամասնությունը՝ 68%-ը չի աշխատում, և դրանից կարելի գալ լայն եզրահանգման, որ բացի այն, որ համայնքներում չկան աշխատատեղեր, նաև համապատասխան կրթության բացակայությունը նպաստում է անհատի գործազուրկ լինելու հանգամանքին:

Աշխատո՞ւմ եք

Միջնակարգ կրթությամբ հարցվող

- Այո
- Ոչ



Այն հարցին, թե կցանկանային արդյոք, որ թիրախ համայնքներում կազմակերպվեն մասնագիտական կողմնորոշման դասընթացներ, ստացել ենք հետևյալ պատկերը.

Միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդներ			Միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդներ		
Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել	Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
96%	4%	0%	76%	12%	12%

Ինչպես տեսնում ենք, հարցված երիտասարդների մեծամասնությունը ցանկանում է, որ համայնքներում կազմակերպվեն մասնագիտական կողմնորոշման դասընթացներ: Սակայն հատկանշական է, որ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդներն ավելի շատ են գիտակցում դրա կարևորությունը, իսկ միջնակարգ կրթություն

ունեցող երիտասարդների 12%-ը դժվարացել են պատասխանել հարցին, քանի որ պարզապես չգիտեն ինչի մասին է խոսքը:

Միջնակարգ կրթություն ունեցող հարցված երիտասարդների մի մասը ստացել է խորհուրդ՝ մասնագիտության կողմնորոշման հարցում, իսկ մի մասը՝ ոչ: Այդ համամասնությունը միմյանց հավասար է: Դա երևում է ներքոհիշյալ գրաֆիկից:

Պատկերը մի փոքր այլ է միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող հարցված երիտասարդների մոտ: Գրաֆիկից երևում է, որ երիտասարդների 17%-ը ստացել է մասնագիտական կողմնորոշման խորհուրդ, իսկ 83%-ը՝ ոչ, սակայն դա չի խանգարել մասնագիտություն ստանալուն:

Ստացել էք մասնագիտական կողմնորոշման խորհուրդ			
Միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդներ		Միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդներ	
Այո	Ոչ	Այո	Ոչ
17%	83%	64%	36%

Ներքոնշյալ աղյուսակից երևում է, որ և միջին մասնագիտական ու բարձրագույն, և միջնակարգ կրթական մակարդակ ունեցող երիտասարդների մեծամասնությունը մասնագիտական կողմնորոշման խորհուրդ ստանում են հիմնականում ծնողներից (69-76%), մի մասն էլ՝ ուսուցչից, սակայն միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների մոտ նկատվում է, որ հասարակական կազմակերպությունները ևս որոշակի ներդրում ունեն դրա մեջ, ինչը կարող է պայմանավորված լինել այն համանգամանքով, որ միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդներն ավելի շատ են մասնակցում հասարակական կյանքին՝ ժամանակը անօգուտ չօգտագործելու նպատակով:

Ո՛ւմ կողմից էք ստացել մասնագիտական կողմնորոշման խորհուրդ													
Միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդներ							Միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդներ						
Ուսուցիչ	Տնօրեն	Հոգեբան	Ծնողներ	ՀԿ ներկայացուցիչ	Ուսումն. հաստատ. ներկայացուցիչ	Այլ	Ուսուցիչ	Տնօրեն	Հոգեբան	Ծնողներ	ՀԿ ներկայացուցիչ	Ուսումն. հաստատ. ներկայացուցիչ	Այլ
18%	0%	0%	76%	0%	0%	6%	8%	0%	0%	69%	0%	8%	15%

Բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների 50%-ը բավարարված է մասնագիտական կողմնորոշման խորհրդից, 33%-ն էլ ոչ գոհ է, ոչ դժգոհ: Հարցման արդյունքները ներկայացված են հետևյալ աղյուսակում.



Բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների բավարարվածությունը մասնագիտական կողմնորոշման խորհրդատվությունից					
Գոհ եմ	Շատ գոհ եմ	Ոչ գոհ եմ, ոչ դժգոհ	Դժգոհ եմ	Շատ դժգոհ եմ	Դժվարանում եմ պատասխանել
50%	17%	33%	0%	0%	0%

Ընդհանուր առմամբ, աղյուսակից երևում է, որ մասնագիտական կողմնորոշման խորհուրդները եթե տրվում են երիտասարդին, ապա տալիս են իրենց դրական ազդեցությունը՝ երիտասարդին ուղղորդելով կառուցելու իր ապագան և ընտրության հարցում չսխալվելու: Սակայն դա դեռևս չի նշանակում, որ տվյալ երիտասարդն աշխատում է իր մասնագիտությամբ: Դա հարցի մյուս կողմն է, քանի որ համայնքներում չկան աշխատատեղեր (հարցման ժամանակ այդպես է պատասխանել հարցվածների 60%-ը), իսկ եթե կան, ապա մի կամ երկու հաստիք, որն արդեն զբաղեցված է: Այդ պատճառով մասնագիտություն ստացած երիտասարդների մեծամասնությունը (79%) չի աշխատում համայնքում:

Հարցումներից պարզ դարձավ, որ միջնակարգ կրթություն ստացած երիտասարդները երբևէ չեն մասնակցել մասնագիտական կողմնորոշման դասընթացների, և ակնհայտ է, որ դա իր ազդեցությունն ունեցել է նրանց հետագա կրթական մակարդակի վրա: Այլ է, երբ երիտասարդը ստանում է տեղեկատվություն մասնագիտության ընտրության և ուսումը շարունակելու վերաբերյալ, մեկ այլ բան է, երբ երիտասարդը չի գիտակցում դրա կարևորությունը:

Միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների 92%-ը չի մասնակցել մասնագիտական կողմնորոշման դասընթացներին, իսկ 8%-ը մասնակցել է, սակայն ֆինասական սուղ պայմանների պատճառով ուսումը չի շարունակել:

Հարցվող երկու խմբերում էլ այն հարցին, թե համայնքում կազմակերպվո՞ւմ են մասնագիտական կողմնորոշման դասընթացներ, մեծ թվով երիտասարդներ պատասխանել են, որ տեղյակ չեն: Դա վկայում է այն մասին, որ կազմակերպվող դասընթացների վերաբերյալ կատարվող աշխատանքներն արդյունավետ չեն կամ ընդհանրապես չեն արվում: Այդ մասին են փաստում ներքոնշյալ գծապատկերները:





Ներքևում պատկերված աղյուսակն արտացոլում է տվյալներ, թե որքան հաճախ են համայնքներում կազմակերպվում մասնագիտական կողմնորոշման դասընթացները: Հարցվող երկու խմբերում երիտասարդների զգալի մասը նշել է, որ տարվա մեջ մեկ անգամ գոնե կազմակերպվում է, իսկ այլի տակ նկատի են ունեցել, որ կամ չի կազմակերպվում կամ նրանք տեղյակ չեն դրա մասին:



Ի՞նչ հաճախականությամբ կցանկանայիք կազմակերպվեն մասնագիտական կողմնորոշման դասընթացներ					
Միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդներ			Միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդներ		
Տարին 1 անգամ	Տարին 2 անգամ	Այլ	Տարին 1 անգամ	Տարին 2 անգամ	Այլ
50%	12%	38%	33%	0%	67%

Մասնագիտական կողմնորոշման դասընթացները թիրախ համայնքներում կազմակերպվում են տնօրենների կամ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից: Ակնհայտ է, որ ուսուցիչները հիմնականում խորհրդի կարգով են մոտենում հարցին, մինչդեռ երիտասարդի կյանքում դրանք հատկանշական դերակատարություն ունեն, և դասընթացի կազմակերպումը պետք է կրի պարբերական բնույթ:



Հաջորդ գրաֆիկից երևում է, որ միջնակարգ կրթություն ունեցող հարցվողների 76%-ը ցանկանում է, որ իրենց համայնքի երիտասարդների համար կազմակերպվեն մասնագիտական կողմնորոշման դասընթացներ, իսկ բարձրագույն կրթությամբ հարցվողների՝ 96%-ը: Միջնակարգ կրթությամբ հարցվողների 12%-ը դժվարանում է պատասխանել հարցին, նույն քանակով էլ ստացվել է ոչ պատասխան: Բարձրագույն կրթություն ունեցողներից շատ քիչ տոկոսն (4%) է տվել ոչ պատասխան: Կարող ենք եզրակացնել, որ բարձրագույն կրթություն ունեցող հարցվողները ավելի են կարևորում մասնագիտական կողմնորոշման դասընթացների դերը:



Մասնագիտական կողմնորոշման դասընթացների կազմակերպման տարբերակներից միջնակարգ կրթություն ունեցող հարցվողների մեծ մասը (40%) ընտրել է տեղում բուհերում, ծանոթանալու տարբերակը, 35%-ը ցանկանում է, որ իրենց համայնքում կազմակերպվի, այնինչ բարձրագույն կրթություն ունեցող հարցվողների 45%-ը նախընտրում է դասընթացների մասնակցել հենց իրենց համայնքում, իսկ տեղում ծանոթանալու տարբերակը ընտրել է նրանց 41%-ը: Մյուս տարբերակները՝ այսինքն՝ որևէ մեկի վերապատրաստումը համայնքից կամ այլ համայնքներում դասընթացների մասնակցելու ցանկություն ունեցողները քիչ տոկոս են կազմում թե միջնակարգ, թե բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում:




Հարցմանը մասնակից թիրախ համայնքների երիտասարդները կարիք ունեն մասնագիտական կողմնորոշման դասընթացների պարբերաբար իրականացման: Գրաֆիկներից պարզ երևում է, որ և միջնակարգ, և բարձրագույն կրթություն ունեցող հարցվողների մեծամասնությունը ընտրել է այլ տարբերակը, ըստ որի նրանք ցանկանում են որ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ դասընթացները տեղի ունենան տարվա մեջ մի քանի անգամ: Հարցվողների մյուս մասը, գրեթե հավասար հարաբերակցությամբ, ընտրել է տարվա մեջ 1 և 2 անգամ կազմակերպվելու տարբերակը:




Միջին մասնագիտական և բարձրագույն կրթական մակարդակ ունեցող երիտասարդների շրջանում հարցման արդյունքում եկանք այն եզրակացության, որ ծնողի կրթական մակարդակը Էական ազդեցություն է ունենում երիտասարդի հետագա կրթության վրա:

Հարցվողների մեծամասնության մոտ այն պատկերն էր, որ եթե ծնողը ունի միջնակարգ կրթություն, ապա երիտասարդի մոտ նույնպես կրթությունը միջնակարգ է: Այդ նույն պատկերը նկատվում է նաև միջին մասնագիտական և բարձրագույն կրթական մակարդակ ունեցող հարցվողների շրջանում: Համադրելով ստացված արդյունքները՝ կարող ենք ասել, որ երիտասարդների շատ չնչին տոկոսի մոտ է, որ ծնողների կրթությունը կամ բարձրագույն է կամ միջին մասնագիտական (միջին մասնագիտական և բարձրագույն կրթական մակարդակի մոտ այդ ցուցանիշը 28% է, իսկ միջնակարգի մոտ՝ 29%):



Հարցվող երիտասարդների մեծամասնությունն (65%) աշխատանք չունի համայնքում աշխատատեղերի բացակայության պատճառով կամ չաշխատելու համար հիմնականում ունի ընտանիքում անհամաձայնություններ:

Թիրախ համայնքներում հարցումները ցույց տվեցին, որ համայնքներում երիտասարդների ծնողների միջնակարգ և միջին մասնագիտական ու բարձրագույն կրթական մակարդակները միմյանց գրեթե հավասար են՝ 1% տարբերությամբ: Սակայն երիտասարդների մոտ այդ համամասնությունը չկա: Համայնքներում ավելի շատ գերակշռում է միջնակարգ կրթությամբ երիտասարդների թիվը:



Վերլուծությունը ցույց տվեց, որ՝

- թիրախ համայնքներում բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների գործազրկությունը պայմանավորված է համայնքում աշխատատեղերի սակավությամբ,
- թիրախ համայնքներում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ստացած երիտասարդները մասնագիտական ընտրություն կատարել են սեփական նախաձեռնությամբ, ծնողի խորհրդով կամ ընտրել են մատչելի տարբերակ,
- թիրախ համայնքներում 17-30 տարեկան երիտասարդների ծնողների կրթական մակարդակն անմիջականորեն ազդում է երեխայի կրթական մակարդակի վրա, քանի որ առավել հաճախ կրթությունը շարունակում են միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ ծնողների երեխաները,
- թիրախ համայնքներում 17-30 տարեկան երիտասարդները դպրոցն ավարտելուց հետո չեն շարունակել կրթությունը մեծամասամբ ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով,
- թիրախ համայնքներում մասնագիտական կողմնորոշման կենտրոնները բացակայում են,
- թիրախ համայնքներում ուսուցիչների կողմից չեն կազմակերպվում մասնագիտական կողմնորոշման դասընթացներ, սակայն տրվում է խորհրդատվություն,
- թիրախ համայնքներում աշխատատեղերը մեծամասամբ սահմանափակվում են համայնքապետարանով և դպրոցով, իսկ թափուր հաստիքներ չկան,
- երիտասարդները մոտիվացված են մասնակցելու մասնագիտական կողմնորոշման դասընթացների,
- թիրախ համայնքների բնակիչները ցանկանում են, որ մասնագիտական կողմնորոշման դասընթացներ կազմակերպվեն հենց իրենց համայնքում կոնկրետ մասնագետների կողմից տարվա մեջ մի քանի անգամ:

ՖՈՎՈՒՄ ԽՈՒՄԲ ԶՆՆԱՐԿՈՒՄ

Հետազոտության ծրագրի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է համատեղ խմբային քննարկում, որը հնարավորություն կտա հավաքագրել կարծիքներ, բացահայտել մասնակիցների վերաբերմունքը հետազոտության ծրագրում առաջադրված խնդիրների վերաբերյալ:

Հետազոտության օբյեկտը

Որպես օբյեկտ ընտրված էին Լոռու մարզի Գյուլագարակ, Գարգառ, Վահագնի, Ձորագյուղ համայնքների էքսպերտները, 17-30 տարեկան երիտասարդների ծնողներ:

Վերլուծություն

«Չարգացած կարողություններով դեպի զարգացող աշխարհ» ծրագրի շրջանակներում նպատակ ունենալով հետազոտել թիրախ համայնքներում 17-30 տարեկան երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանն առնչվող խնդիրները և բացահայտել այդ համայնքներում մասնագիտական կողմնորոշման առավել արդյունավետ մոդել՝ իրականացվել են երկու ֆոկուս խումբ քննարկումներ: Ֆոկուս խմբի քննարկումները տալիս են պատասխան թիրախ համայնքներում բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկ երիտասարդների գործազրկության պատճառների, մասնագիտական կողմնորոշման հանգամանքների, մասնագիտական կողմնորոշման դասընթացների կազմակերպման վերաբերյալ, տեղեկատվության այն մասին, թե երիտասարդները որքանով են մոտիվացված մասնակցելու մասնագիտական կողմնորոշման դասընթացների:

Առաջին ֆոկուս խմբին մասնակցել են թիրախ համայնքներից հրավիրված փորձագետներ՝ ուսուցիչներ, դպրոցի տնօրեններ, համայնքների մշակույթի տան ներկայացուցիչներ, համայնքապետեր, ընդհանուր թվով՝ 12 փորձագետ: Ֆոկուս խմբում հնչեցրած հարցերի արդյունքում բացահայտվեց, որ համայնքներում մինչև 2015 թվականը մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ չեն կազմակերպվում, սակայն ուսուցիչները փորձում են ուղղորդել աշակերտներին այս կամ այն մասնագիտության ընտրության հարցում: Երբեմն իրենց խորհրդով կիսվում են աշակերտների հետ նաև դպրոցի տնօրենները: Ուսուցիչներն ու տնօրենները, սրտացավ լինելով իրենց աշակերտների ապագայի համար, փորձում են երիտասարդներին ուղղորդել դեպի գրագիտություն:

Ըստ ֆոկուս խմբի մասնակիցների՝ արդեն 2016 թվականին միջազգային կազմակերպություններից մեկը երիտասարդներին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում հնարարություն են տվել ծանոթանալու տեխնոլոգիական նորարարություններին և ծրագրերի դասավանդման գործընթացին, ինչպես նաև ծրագրի շարունակականությունն ապահովելու համար նշվեց, որ ուսուցիչները ոմանք նաև վերապատրաստվել են:

Ուսուցիչներին տրված այն հարցին, թե ինչու է համայնքներում մասնագիտություն չունեցող երիտասարդների քանակը շատ, պատասխանեցին, որ դպրոցի վերջին դասարաններում երեխտասարդները ունենալով ֆինանսական խնդիր՝ օրվա հացը վաստակելու համար ստիպված են աշխատել այգիներում, դաշտերում, անգամ գնալ փայտահատման աշխատանքների: Հարցերից պարզ դարձավ, որ ամեն դեպքում դպրոցի մասնագետների կողմից ուղղորդումները կրում են ոչ ֆորմալ բնույթ ելնելով անհատական-անձնային որակներից: Նշվեց, որ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն չստանալու հանգամանքը պայմանավորված է ընտանիքում առկա սոցիալական խնդիրներով: Ուսուցիչներից մեկը նշեց, որ աշակերտներից մեկը վերջին զանգի ֆինանսական հարցերը լուծելու համար ձմռանն ու գարնանը անտառից փայտ է բերել ու վաճառել, անգամ դպրոց չի գնացել: Նշեցին, որ աշակերտները գյուղական աշխատանքները սկսվելուն պես դժվարանում են անգամ դպրոց հաճախել, քանի որ օգնում են ծնողին գյուղատնտեսական վար ու ցանքի ժամանակ: Ուսուցչի աշխատանքը դրանով ևս բարդանում է, քանի որ շակերտները ետ են մտնում ծրագրերից:

Ֆոկուս խումբ քննարկման ժամանակ Ձորագյուղի ներկայացուչիցները նշեցին, որ գյուղում գործում է հիմնական դպրոց (դպրոց են գնում մինչև 9-րդ դասարան) և երեխաները ուսումը շարունակաբար են համայնքին մոտ քաղաքների դպրոցներում և հետևաբար, եթե անգամ գնում են ԲՈՒՀ-ում սովորելու, համարվում են սովյալ ավագ դպրոցի սան: Վերջիններիս մեծամասնությունը (հիմնականում տղաներ) վերադառնում են գյուղ, իսկ աղջիկները միայն այն դեպքում, երբ չեն ամուսնանում:

Թե ինչպես են երիտասարդներն ընտրում իրենց մասնագիտությունը, ֆոկուս խմբի մասնակիցների մոտ հնչեց այն պատասխանը, որ հիմնականում ընտրում են իրենց ցանկությամբ, սակայն մեծ ազդեցություն են ունենում ծնողները: Փորձագետները նշեցին, որ հաճախ ծնողները միմյանց հետ մրցակցում են՝ ցանկանալով, որ իրենց երեխան ևս սովորի, հետ չմա մյուսներից: Չուզահեռ նշեցին, որ հիմնականում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող ծնողներն են առավել հակված իրենց երեխային տալ բարձրագույն կրթություն:

Երիտասարդների մի մասը մասնագիտություն ընտրում է ելնելով ընտանիքի ֆինանսական վիճակից: Համայնքներում երիտասարդներն ունեն բազմաթիվ ֆինանսական խնդիրներ, ինչի արդյունքում չեն կարողանում ուսումնական հաստատություններում սովորել: Օրինակ՝ ֆոկուս խմբի մասնակիցներից մեկը նշեց, որ ճանաչում է մի քանի երիտասարդների, ովքեր ցանկություն են ունեցել սովորել բժշկական համալսարանում, սակայն գիտենալով, որ ծնողները չեն կարող հոգալ վարձավճարը և այլ բնակավայրում ապրելու ծախսերը ընտրել են այլ մասնագիտություն:

Պետք է նկատի ունենալ, որ ուսուցչի կերպարը հաճախ դառնում է ընտրության ճա-նապարհ: Ֆոկուս խմբի մասնակիցներիցը նշեց մի դեպք, որ երեխաներից մեկը շատ է սիրում իրենց հայրոց լեզվի ուսուցչուհուն, ուզում է դառնալ հայրոց լեզվի մասնագետ: Հաճախ մեծ դեր ունի այն հանգամանքը, որ աշակերտները այցելում են որևէ կրթական հաստատություն, տեղում ծանոթանում մասնագիտությունների և կողմնորոշվում:

Փորձագետները նշեցին, որ տարվա մեջ մեկ կամ երկու անգամ հիմնականում մայիս ամսին, մարզկենտրոնում գործող մեծ բուհերից դասախոսներ են գալիս համայնք և երեխաներին սեմինարների միջոցով ծանոթացնում են ԲՈՒՀ-ի մասնագիտությունների, սակայն, ինչպես նշեց մասնակիցներից մեկը դա ավելի շատ ուսանող ներգրավելու քաղաքականության արդյունք է:

Հարցին, թե ինչ աշխատատեղեր կան համայնքներում, ֆոկուս խմբի մասնակիցները նշեցին համայնքապետարանը, դպրոցն ու հավելեցին, որ այլ տեղ չկա աշխատելու: Ուսուցիչները նշեցին, որ երիտասարդ մասնագետի կարք ունեն՝ պատմության, մաթե-մատիկայի, քիմիայի, բժշկության ոլորտի, սակայն քանի որ այդ մասնագիտությունները դժվար են սերտվում երիտասարդները չեն ընտրում այդ մասնագիտությունները:

Հատկանշական է այն հանգամանքը, որ համայնքներում հատկապես ուսում ստանալու ցանկություն ունեն այն ծնողների երեխաները, ովքեր ունեն միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն: Նրանք, անկախ այն հանգամանքից, որ համայնքում չկա աշխատատեղ, սովորում են ինքնազարգացման համար: Փորձագետները նշեցին, որ համայնքներում կարիք կա ամեն տարի մի քանի անգամ մասնագիտական կողմնորշման դասընթացների կազմակերպման հենց տեղում, նշեցին որ կցանկանային ստանալ նաև բիզնես գրագիտության հետ կապված դասընթացներ:

Երկրորդ ֆոկուս խումբը անցկացվեց ծնողների հետ : Քննարկման ժամանակ այն հարցին, թե որքան է համայնքներում բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ երիտասարդների թիվը, պատասխանեցին՝ մոտավորապես 20%: Ծնողները ավելացրեցին նաև, որ աղջիկները հիմնականում ստացիոնար են սովորում, իսկ տղաները հեռակա: Հեռակա սովորելու պատճառը էժան տարբերակ լինելն է, չնայած սա հարցի միայն մի կողմն է: Մյուս կողմից՝ դա երիտասարդին հնարավորություն է տալիս օգնել նաև ծնողներին գյուղատնտեսական աշխատանքներում:

Ծնողները այն հարցին, թե ավելի շատ բարձրագույն, թե՞ միջնակարգ կրթությամբ են երիտասարդների թիվն է գերակշռում, պատասխանեցին՝ բարձրագույն կամ միջին

մասնագիտական, կշեղով որ դա մոդայիկ է: Հատկանշական է այն, որ փորձագետները ևս հիշատակել էին այս փաստը:

Ծնողները կշեցին, որ ավելի շատ հաշվի են առնում երիտասարդի նախասիրությունը մասնագիտության ընտրության հարցում, իսկ իրենք ուղղակի փորձում են կատարել իրենց ծնողական պարզը՝ օժանդակել ու հովանավորելով երեխային: Երիտասարդը նախօրոք գիտեն՝ ինչ մասնագիտություն է ուզում ստանալ և բարձր դասարաններից սկսում են պարապել մասնագետների մոտ բուհ ընդունվելու համար:

Համայնքներում չկան մասնագիտական կողմնորոշման համար նախատեսված հատուկ կենտրոններ, և տարվա մեջ մեկ կամ երկու անգամ տրված խորհրդատվությունն ամենևին հարցի լուծում չէ: Այն հարցին, թե ինչ աշխատատեղեր կան համայնքում պատասխանեցին բուժկետ, դպրոց: Ունեն լեզուների մասնագետի կարիք:

Ֆոկուս խմբում մասնակից ծնողների մեծ մասը չունեն բարձրագույն կրթություն: Նույն պատկերը ընդհանուր համայնքի մասշտաբով է: Օրինակ Գարգառի ներկայացուցիչը կշեց, որ համայնքում 20 ծնողից միային 2-ն ունեն բարձրագույն կրթություն, սա-կայն ցանկանում են, որ իրենց երիտասարդը կրթություն ու ձեռք բերի մասնագիտություն, որ լինի իրենից լավը՝ զարգացած, ինքնադրսևորված և կայացած, կարողանա իր լավն ու վատը տարբերել, հասնի այն ամենին, ինչին ինքը չի կարողացել հասնել:

Ծնողները կշեցին, որ դպրոցից հետո աղջիկները դառնում են տնային տնտեսուհիներ, իսկ տղաների զգալի մասը դառնում է պայմնագրային զինծառայող: Կարևոր է կշեց, որ այդ պայմնագրային ծառայողներից շատերը աշխատելուն զուգահեռ ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ հետագայում բարձր կոչումներ ստանալու համար: Ծնողները կշեցին, որ իրենց համար ցավալի է խոսել այդ մասին, սակայն հնարավորության դեպքում օժանդակում են իրենց երեխաներին, որպեսզի կրթությունը շարունակելուց հետո աշխատանք գտնեն քաղաքում և այնտեղ կայանան:

Ծնողներն այն հարցին, թե ինչ բնույթի մասնագիտական կողմնորոշման դասընթաց կցանկանային կազմակերպվի երեխայի համար, պատասխանեցին, որ կցանկանային դասընթացները կազմակերպվեն այնպես, որ երիտասարդներն ընտրեն ոչ թե առավել մոդայիկ մասնագիտություն, այլև գիտակցեին իրենց ընտրած մասնագիտության կարևորությունը, ինչն առավել հավանական կդարձնի, որ երիտասարդը ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո կգտնի աշխատանք:

Ծնողները կշեցին, որ իրենց երեխաներից շատերը դպրոցներում չեն կարողանում լավ սովորել, սակայն դրա փոխարեն ունեն այլ տաղանդներ՝ ձեռքի շնորհ: Սակայն այդ պարագայում ծնողները չեն կարևորում երեխայի մոտ այդ ուղղությամբ հմտություն զարգացնել: Կան նաև հաջողված օրինակներ: Բերեցին այն օրինակը, որ մի երեխա դպրոցում ընդհանրապես չէր սովորում, սակայն լավ դիզայն է անում, ասեղնագործում և իր ձեռքի աշխատանքները վաճառում, կամ ունեն աղջիկներ, որոնք լավ պարում են և հիմա գյուղում պարի խմբակ են բացել: Դա դարձել է նրանց եկամտի աղբյուրը:

Խոսվեց այն մասին, որ համայնքները կարիք ունեն դասընթացների, որոնք նպաստում են երիտասարդի մոտ որևիցե հմտության զարգացմանը, նամանավանդ այն երիտասարդների համար, ովքեր դպրոցից հետո կրթությունը չեն շարունակել: Այդ խմբակները պետք է գործեն տարրական դասարանի երեխաների համար, որ վաղ տարիքից նրանց մեջ զարգանա հետաքրքրասիրությունը: Կշեցին, որ խմբակներ ամեն դեպքում կան, սակայն մի քանի համայնքի համար մեկն է և այս պարագայում առաջ են գալիս մի շարք խնդիրներ: Օրինակ՝ մի համայնքից մյուսը գնալու համար տրանսպորտից են օգտվում, ինչը հանգեցնում է ֆինանսական խնդրի: Ոչ բոլոր ծնողները հնարավորություն ունեն լուծելու այդ խնդիրը:

Ծնողները, ինչպես նաև փորձագետները կշեցին, որ երիտասարդի մասնագիտական կողմնորոշման հարցում մեծ դեր է կատարում ուսուցիչը: Երիտասարդը ոգեշնչվելով ուսուցչի կերպարից, փորձում է ընդօրինակել նրան:

Այն հարցին, թե ինչ հաճախականությամբ կցանկանան կազմակերպվի մասնագիտական կողմնորոշման դասընթաց, ծնողները պատասխանեցին՝ տարին մի քանի անգամ, և 9-րդ դասարանից սկսած:

Այսպիսով՝ սոցիոլոգիական հարցումների և ֆոկուս խումբ քննարկումների վերլուծությունները ցույց տվեցին, որ.

- Համայնքներում և փորձագետները, և ծնողները երիտասարդի կյանքում կարևորում են մասնագիտական կողմնորոշման դասընթացների դերը,
- Երիտասարդները կարիք ունեն հաճախակի ստանալու մասնագիտական խորհրդատվություն ոչ միայն ծնողի, այլ մասնագետի կողմից,
- Եթե երիտասարդները ստանան ճիշտ խորհրդատվություն, աշխատանք ունենալու հավանականությունը կմեծանա,
- Ուսուցիչները պատշաճ ուշադրության չեն արժանացնում մասնագիտական խորհրդատվության հարցը,
- Երիտասարդներից ոմանք չեն ստանում բարձրագույն կրթություն ֆինանսական, սոցիալական պատճառներով,
- Համայնքներում մասնագետները, ծնողները գերադասում են, որ երիտասարդները մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն ստանան տեղում, մասնագետի կողմից:

Հետազոտության ծրագրում ներառված հիպոթեզները հաստատվել են՝

- Ծնողների կրթական ցենզը ցածր է, այդ պատճառով նրանք չեն կարողանում օգնել երեխաներին մասնագիտական կողմնորոշման հարցում,
- Աշխատատեղերի բացակայությունը հանգեցնում է բարձրագույն կրթություն ստանալու մոտիվացիայի պակասի,
- Քանի որ այսօր կրթությունը երիտասարդների համար արժեք չէ, հետևաբար նրանք ընտրում են առավել մատչելի տարբերակներ: